ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի, ժամը 14:00-ի ընդլայնված նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ»մ դասախոսությունների նյութերի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված դասախոսությունների նյութերն ունեն կարևոր գործնական նշանակություն և նախատեսված են համալսարանի ասպիրանտական ծրագրում ներառված «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» դասընթացի շրջանակներում դասերի անցկացման համար: Աշխատանքում ներկայացված են. ինչպես է փոխվել կրթական համակարգը՝ պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, ինչպիսի դրական և բացասական ազդեցություն ունեն դրանց կիրառություններն այս ոլորտում, ինչպիսի նոր մոդելներ են առաջացել, որոնք են դրանց առավելություններն ու թերությունները, ինչպիսի նոր հասկացություններ ու մոտեցումներ են ձևավորվել և դրանցից որն ունի առավել մեծ կիրառություն՝ պայմանավորված նպատակներով և խնդիրներով:

Դասախոսությունների նյութերն ուղարկվել են 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: 2 գրախոս փորձագետների եզրակացությունները վերադարձվել են հեղինակներին թերությունները շտկելու կամ պարզաբանումներ ներկայացնելու համար: Հեղինակների դիտարկումները ներկայացվելուց հետո դասախոսությունների նյութերն ուղարկվել են կրկնակի գրախոսության և փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Դասախոսությունների նյութերի վերաբերյալ ստացվել են նաև 2 ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Ա.Լ.Թումանյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

2. Ա.Ա.Սարգսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոս փորձագետների եզրակացությունները, 2 ներքին գրախոսների դրական կարծիքները, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Արգամ Համլետի Արտաշյանի «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» դասախոսությունների նյութերը** երաշխավորել հրատարակության: Այն նախատեսված է «Տնտեսագետ» հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով: Համապատասխան գրիֆը ստանալուց հետո դասախոսությունների նյութերը հրապարակել էլեկտրոնային տարբերակով և տեղադրել ՀՊՏՀ պաշտոնական կայքում: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. դեկտեմբերի 22
Երևան